



ՀՈԳԵԳԱՂՈՒՄՏԷՆ ԵՏԲ ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

26 ՅՈՒՆԻՍ 2022

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
(1.2-15)

Լսէ՛, ո՛վ երկիրնք, ա կա՛նջ դիր, ո՛վ երկիր, որովհետեւ Տէրը կը խօսի. «Զաւակներ ծնայ եւ մեծցուցի, բայց անոնք զիս ուրացան: Նոյնիսկ եզր զինք պահողը կը ճանչնայ, էշը գիտէ իր տիրոջ մսուրը, բայց Իսրայէլ իր Տէրը չի ճանչնար, իմ ժողովուրդս չի հասկնար զիս»:

Ո՛վ մեղաւոր ազգ, անօրէնութեամբ լի ժողովուրդ, չար սերունդ, դո՛ւք, անօրէն գաւակներ: Լքեցիք Տէրը, բարկացուցիք Իսրայէլի Սուրբը, օտարացաք եւ կռնակ դարձուցիք: Չի՞ բաւեր ձեր ստացած հարուածը, որ տակաւին կը շարունակէք ձեր մեղքերուն մէջ մնալ: Ահա հիւանդ էք գլխովին եւ տրտում էք սրտովին. վէրքով, ուռեցքով ու թարախալից պալարներով ծածկուած էք, որոնք կը մնան առանց սպեղանիի, ձէթի կամ վիրակապի:

Ձեր երկիրը աւերակ դարձած է, ձեր քաղաքները հրկիզուած, ձեր աչքին առջեւ օտար ազգեր կ'աւարեն, կ'աւերեն ու կը կործանեն ձեր աշխարհը: Սիոնի դուստրը՝ Երուսաղէմը միայն մնացեր է, այն ալ պաշարուած ու լքուած, նման՝ կուլթէն վերջ այգիին մէջ լքուած պահապանի հիւղակին,

կամ սեխաստանին մէջ թողուած մրգապահներու ծածկին: Եթէ Երկնային Զօրքերու Տէրը մեզմէ մնացորդներ պահած չըլլար՝ Սողոմի կամ Գոմորի նման կորսուած պիտի ըլլայինք: Լսեցէ՛ք Տիրոջ խօսքը, ո՛վ Սողոմի իշխաններ, Աստուծոյ օրէնքներուն ա կանջ տուէք, ո՛վ Գոմորի ժողովուրդ. այսպէս կ'ըսէ Տէրը.

«Ի՞նչ կ'արժեն ինծի ձեր բազմաթիւ զոհերը. ա՛լ զզուեցայ ձեր խոյերու ողջակէզներէն եւ պարարտ անասուններու ճարպէն: Չեմ ուզեր գառնուկներու, ցուլերու եւ նոխագներու արիւնը: Ո՛վ պահանջեց ձեզմէ այս բաները, իմ ներկայութեանս գալու համար. ո՞վ ուզեց որ այդպէս ոտք կոխէք իմ գաւիթներէս ներս: Զուր տեղ նուէրներ մի՛ բերէք ինծի այլեւս. ձեր ծխած խոունկը պիղծ է ինծի համար: Չեմ կրնար տանիլ նորալուսնի նուիրած ձեր տօները, Շաբաթներն ու կրօնական հաւաքոյթները. ձեր տօնախմբութիւնն իսկ անօրէնութիւն է: Կ'ատեմ ձեր նորալուսնի եւ այլ տօները. զզուած եմ ձեզմէ, ա՛լ պիտի չներեմ ձեր մեղքերը: Երբ աղօթքի համար ձեր ձեռքերը բարձրացնէք՝ պիտի չնայիմ ձեզի. նոյնիսկ եթէ ձեր աղօթքները բազմացնէք՝ պիտի չլսեմ ձեզ, որովհետեւ ձեր ձեռքերը արիւնով ծածկուած են»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ
ՆԱՄԱԿԷՆ
(6.12-23)

Այսուհետեւ մեղքը թող չթագաւորէ ձեր մահկանացու մարմիններուն մէջ, զանոնք իր ցանկութեանց հնազանդեցնելով: Մեղքին անձնատուր մի՛ ըլլաք, ձեր անդամները անիրաւութեան գործիք

... ձեր մարմինները Աստուծոյ ձեռքին մէջ արդարութեան գործիք դարձուցէք:

դարձնելով, այլ որպէս մահուընէ կեանքի եկած մարդիկ՝ դուք ձեզ Աստուծո՛յ յանձնեցէք եւ ձեր մարմինները Աստուծոյ ձեռքին մէջ արդարութեան գործիք դարձուցէք: Մեղքը

ձեր վրայ պէտք չէ իշխէ, քանի դուք օրէնքին ենթակայ չէք, այլ շնորհքին:

Ուրեմն ի՞նչ. քանի շնորհքին ենթակայ ենք եւ ո՛չ օրէնքին, մե՞ղք գործենք: Բնա՛ւ երբեք: Լաւ գիտցէք, թէ որո՛ւ ծառայութեան որ նուիրուիք եւ հնազանդիք՝ անոր ծառան եղած կ'ըլլաք: Մեղքին ծառայելով՝ մահուան կ'ենթարկուիք, մինչ Աստուծոյ հնազանդելով՝ կ'արդարանաք: Գոհուի՛ր՝ Աստուծոյ, որ թէպէտ ժամանակ մը մեղքին ծառայ դարձած էիք, բայց որովհետեւ սրտանց հնազանդեցաք ձեզի աւանդուած վարդապետութեան օրինակին, մեղքի տիրապետութենէն ազատեցաք եւ արդարութեան ծառայ դարձաք: Ծառայի օրինակով կը խօսիմ, որովհետեւ այդպէս աւելի հասկնալի է ձեզի: Ինչպէս որ ժամանակ մը ձեր մարմինները անօրէնութեան տուած՝ պղծութեան եւ անօրէնութեան կը ծառայէիք, այնպէս ալ հիմա սրբութեան տուէք ձեր մարմինները եւ արդարութեան ծառայեցէք: Երբ մեղքին ծառան էիք, հեռու էիք արդարութենէն: Ի՞նչ շահեցաք այն ժամանակուան ձեր

գործերէն, որոնցմէ կ'ամչնաք հիմա. որովհետեւ անոնց հետեւանքը մահ է: Բայց հիմա մեղքին տիրապետութենէն ազատ էք եւ Աստուծոյ ծառաներն էք: Ձեր շահը սրբութեան նուիրուած կեանք մըն է, որուն արդիւնքը պիտի ըլլայ յաւիտենական կեանքը: Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է, մինչ Աստուած որպէս ձրի պարգեւ՝ յաւիտենական կեանք կու տայ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
(12.1-8)

Շաբաթ օր մը Յիսուս արտերուն մէջէն կ'անցնէր:

Աշակերտները անօթեցած ըլլալով սկսան հասկ փրցնել եւ ուտել: Երբ փարիսեցիները ասիկա տեսան, ըսին Յիսուսի. «Տե՛ս, աշակերտներդ ի՛նչ կ'ընեն. բան մը որ արգիւտուած է Շաբաթ օրով ընել»: Յիսուս պատասխանեց. «Չէ՞ք կարդացած թէ ի՛նչ ըրաւ Դաւիթ, երբ ինք եւ իր հետ եղողները անօթեցան: Աստուծոյ տունը չմտա՞ւ եւ Առաջաւորութեան հացը չկերա՞ւ, որ օրէնքին համաձայն միայն քահանաներուն արտօնուած էր եւ ո՛չ թէ իրեն կամ իր հետ եղողներուն: Կամ չէ՞ք կարդացած Մովսէսի Օրէնքին մէջ, թէ Շաբաթ օրեր քահանաները տաճարին մէջ կը սրբապղծեն Շաբաթը սակայն ատիկա մեղք

Ողորմութիւն կ'ըզգեմ եւ ոչ թէ գոհ:

չի համարուիր իրենց: Ահա կ'ըսեմ ձեզի, որ տաճարէն աւելի մեծ մէկը կայ հոս: Եթէ իրապէս հասկնայիք թէ ի՛նչ կը նշանակէ մարգարէին խօսքը. «Ողորմութիւն կ'ըզգեմ եւ ոչ թէ գոհ», այն ատեն չէիք դատապարտեր անմեղները, որովհետեւ մարդու Որդին Տէրն է Շաբաթին»: